Մի ռեկտոր ակադեմիկոս դարձավ, մյուսը՝ ոչ

Երեկ՝ դեկտեմբերի 28-ին ավարտվեցին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոսների եւ թղթակից անդամների ընտրությունները, որոնց արդյունքում այդպես էլ չհամալրվեց 2 ակադեմիկոսի եւ 6 թղթակից անդամի տեղ:

Ինչպես հայտնի է՝ ԳԱԱ ակադեմիկոսի թափուր տեղերը 6-ն էին, իսկ թղթակից անդամինը՝ 22-ը: Ընտրված 4 ակադեմիկոսներն են՝ մաթեմատիկա մասնագիտության գծով՝ ԵՊՀ պրոռեկտոր Գեղամ Գրիգորյանը, քիմիայի գծով՝ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Արամ Շահինյանը, կենսատեխնոլոգիայի գծով՝ ԵՊՀ դեղագործական քիմիայի ամբիոնի վարիչ Աշոտ Սաղյանը, իսկ տնտեսագիտության գծով՝ Հայաստանի տնտեսագիտական համալսարանի ռեկտոր Յուրի Սուվարյանը: Այն, որ պատմություն մասնագիտության գծով ներկայացված ակադեմիկոսի 4 թեկնածուներից ոչ ոք ակադեմիկոս չդարձավ, հայտնի էր դեռ դեկտեմբերի 27-ին: Այդ օրը ԳԱԱ բաժանմունքներում կազմակերպվել էին առաջին փուլի ընտրությունները: Այստեղ պետք է ակադեմիկոսի թեկնածուներից ընտրեին մեկին, որի համար էլ հաջորդ օրը քվեարկելու էր ԳԱԱ Ընդհանուր ժողովը: Բայց արդեն երեկ պատմություն մասնագիտության համար թեկնածու այլեւս չկար: Ու չնայած նախապես հայտարարվում էր, թե ամեն ինչ կանխորոշված է, եւ որ Երեւանի պետական համալսարանի ՀՀԿ-ական ռեկտոր Արամ Սիմոնյանն է դառնալու այդ մասնագիտության գծով ակադեմիկոս, ԳԱԱ ընտրությունները, փաստորեն, նաեւ անակնկալներ են մատուցում, եւ Արամ Սիմոնյանն ընդամենը մեկ ձայն պակասելու պատճառով դեկտեմբերի 27-ին չանցավ ընտրությունների հաջորդ եւ վերջին փուլ:

Ակադեմիկոսի մյուս թափուր մնացած տեղն իրավագիտություն մասնագիտության գծով էր: Այստեղ ի սկզբանե առաջադրված էր մեկ թեկնածու, եւ դա ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկան Գագիկ Ղազինյանն էր, որը եւ չհավաքեց անհրաժեշտ թվով ձայներ:

Ինչ վերաբերում է թղթակից անդամների չհամալրված տեղերին, նշենք, որ դրանք հետեւյալ մասնագիտությունների գծով են՝ էներգետիկա, երկրաբանություն, մոլեկուլային կենսաբանություն, մոլեկուլային կենսաբանություն եւ կենսաֆիզիկա, գիտություն շրջակա միջավայրի մասին, կենսաքիմիա: Նկատենք, որ մոլեկուլային կենսաբանություն եւ կենսաֆիզիկա մասնագիտության գծով քվեարկվող թեկնածուն Գիտության պետական կոմիտեի նախագահ, ԵՊՀ նախկին պրոռեկտոր Սամվել Հարությունյանն էր: Բայց նրան եւս երեկ կայացած ընտրություններն առնվազն մի քանի տարով հեռացրին ԳԱԱ թղթակից անդամի կոչումից: Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի նախկին ռեկտոր Արտուշ Ղուկասյանը նույնպես չդարձավ թղթակից անդամ, ու նրա հետ մրցակցության արդյունքում մեխանիկա մասնագիտության գծով ընտրություններում հաղթեց Ֆիզմաթ գիտությունների դոկտոր Սուրեն Մխիթարյանը: ԳԱԱ ընտրություններում հաջողությունը երես էր թեքել նաեւ Գնահատման եւ թեստավորման կենտրոնի նախկին տնօրեն Վանյա Բարսեղյանից: Նա եւս ԳԱԱ թղթակից անդամի թեկնածու էր՝ մեխանիկայի գծով: Դարձյալ անհաջողակ թեկնածուների շարքում էին Երեւանի ճարտարագիտական համալսարանի ռեկտոր Ոստանիկ Մարուխյանը՝ էներգետիկայի գծով եւ ՀՀ ֆինանսների նախկին նախարար Էդվարդ Սանդոյանը՝ տնտեսագիտություն մասնագիտության գծով: Իսկ ահա ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալ Ստեփան Պետրոսյանին բախտը ժպտացել է, եւ նա կոնդենսացված միջավայրի ֆիզիկա մասնագիտության գծով երեկ ընտրվեց ԳԱԱ թղթակից անդամ:

ԱՀ